



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր

10/11/2024

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Կարեն Բաղդասարյանը, Վիգեն Գրիգորյանը, Նարինե Խաչատրյանը, Հայկ Մարգարյանը, Վիտալի Յուսուբովը, Ջոն Պողոսյանը, Վահան Ստեփանյանը, Արման Վարդանյանը, Իզաբելա Տոմեյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Սամվել Շահբազյան, Նաթելլա Մուրադյան, Անուշ Բաղդասարյան, Աստղիկ Բարոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը

Նիստը արձանագրում էր՝ Նունե Սուլյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի
հոկտեմբերի 11-ի հերթական նիստի օրակարգը՝

- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի
հաղորդումը 2024 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին,
- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը
պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման
տրամադրելու մասին,

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը աճուրդով օտարելու մասին,
4. Անուշ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ հողամասում կաթի վերամշակման արտադրամասի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,
5. «Ռաֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Օ Փիեռ Գրուպ Ունիվերսալե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կոնսորցիումի կողմից Կաթնառատ բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,
6. Ընդերքօգտագործման իրավունք ունեցող «Կամենկա սթոուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին,
7. Քաղաքացի Ռուբիկ Տելեմակի Ջավուկյանի սեփականությունը հանդիսացող անասնագոմ կառուցելու համար նախատեսվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի մարզադպրոց բյուջետային հիմնարկը լուծարելու մասին,
9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի գրադարանների կենտրոնացված համակարգ բյուջետային հիմնարկը լուծարելու մասին,
10. Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ, դյուցազնագրքի և Գինեսի բազմակի ռեկորդակիր, Տաշիր համայնքի բնակիչ Արտյոմ Բագրատի Սոլոյանին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին,
11. Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատան կողմից իրականացվող «Մարդկային անվտանգության ծրագրերի շրջանակներում «Տաշիր համայնքի Սևաբերդի (Հովդարա) ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի դրամաշնորհային գումարի համաֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին,
12. Ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,
13. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Տաշիր համայնքի ավագանի որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն 2024 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշումով հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով՝ վարձակալության իրավունքով, տրամադրել օգտագործման:

2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱՋՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը օտարել աճուրդով և սահմանել մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին

**ԱՆՈՒՇ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՕՐՅԵԿՏՆԵՐ ԳՈՐԾԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱԹԻ
ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀՐԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով « Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 05.09.2024-ի Անուշ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ հողամասում կաթի վերամշակման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն Անուշ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Պուշկինի փողոց, թիվ 187-189 հասցեի հողամասում կաթի վերամշակման արտադրամասի կառուցման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Անուշ Սուքիասյանը չի մասնակցել քվերակությանը՝ շահերի բախման իրավիճակի առաջացումից խուսափելու նպատակով:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

«ՌԱՖ ՕԶԱԽ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԹՆԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով « Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 24.09.2024-ի «Ռաֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Օ Փիեռ Գրուպ Ունիվերսալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կոնսորցիումի կողմից Կաթնառատ բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Ռաֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Օ Փիեռ Գրուպ Ունիվերսալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կոնսորցիումի կողմից Կաթնառատ բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին

ԸՆԴԵՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ «ԿԱՄԵՆԿԱ ՍԹՈՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի

Հանրապետության կառավարության N286 որոշումով հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օգտակար հանձնարարության արդյունահանման թույլտվություն N° ՇԱԹ -29/745 (տրված 10.07.2024-ին) և լեռնահատկացման ակտ N° Լ-745

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, թիվ 2 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տամադրված 5,95813 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0503-0014) հողամասը առանց մրցույթի, վարձակալության իրավունքով, 20 տարի ժամկետով, տրամադրել «Կամենկա սթոուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տարեկան 85000 (ութսունհինգ հազար) ՀՀ դրամ վարձավճարով:

2. «Կամենկա սթոուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման: 3. Վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՔԻԿ ՏԵԼԵՄԱԿԻ ԶԱՎՈՒԿՑՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՄՆԱԳՈՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀՐԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. «Քաղաքացի Ռուբիկ Տելեմակի Զավուկցյանի սեփականությունը հանդիսացող «անասնագոմ»-ի կառուցման համար նախատեսվող բնակվայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության՝ 0,0925 հա (կադաստրային ծածկագիր՝ 06-074-0118-0009) հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ «գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» գործառնական նշանակությամբ:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Լուծարել «Հայաստանի Հանրապետության Տաշիրի մարզադպրոց » բյուջետային հիմնարկը:

2. Օրենքով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին «Հայաստանի Հանրապետության Տաշիրի մարզադպրոց» բյուջետային հիմնարկը հաշվառումից հանելու (գործունեության դադարման) համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Լուծարել «Հայաստանի Հանրապետության Տաշիրի գրադարանների կենտրոնացված համակարգ» բյուջետային հիմնարկը:

2. Օրենքով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին «Հայաստանի Հանրապետության Տաշիրի գրադարանների կենտրոնացված համակարգ» բյուջետային հիմնարկը հաշվառումից հանելու (գործունեության դադարման) համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին

ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ, ԴՅՈՒՑԱԶՆԱԳՐՔԻ ԵՎ ԳԻՆԵՍԻ ԲԱԶՄԱԿԻ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ԲԱԳՐԱՏԻ ՍՈԼՈՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 20-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N57-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Արտյոմ Բագրատի Սոլոյանի դիմումը (մուտք `11.09 .2024-ի ԲԴ-920-24)՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Բավարարել Արտյոմ Բագրատի Սոլոյանի դիմումը և նրան ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի բյուջեից տրամադրել 100000 (հարյուր հազար) դրամ ֆինանսական աջակցություն՝ Պորտուգալիայի Հանրապետության Մախա քաղաքում անցվացող պուրլիֆտինգի Աշխարհի առաջնությանը մասնակցելու համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՎԱԲԵՐԴԻ (ՀՈՎԴԱՐԱ) ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները.

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան կողմից իրականացվող «Մարդկային անվտանգության ծրագրերի շրջանակներում «Տաշիր համայնքի «Սևաբերդի» (Հովդարա) ջրամատակարարման համակարգի վերակառուցման» ծրագրի դրամաշնորհային գումարի 20% գումարի համաֆինանսավորմանը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի նոյեմբերի 22-ը , ժամը՝ 14:30-ին:

Լսեցին

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1 Թույլատրել ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում բացել արտաբյուջետային հաշիվ՝ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան կողմից իրականացվող «Մարդկային անվտանգության ծրագրերի» շրջանակներում Տաշիր համայնքի Սևաբերդի (Հովդարա) ջրամատակարարման համակարգի

վերակառուցման ծրագրի համար դրամաշնորհի ստացման ՀՀ Դրամ և ԱՄՆ Դոլլար արժույթներով արտաբյուջետային հաշիվների բացելուն:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Ավագանու անդամներ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Գ. ԶԱՎՈՒԿՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ _____

Նիսպոն արձանագրեց՝ ՆՈՒՆԵ ՍՈԼԱՅԱՆԸ
